

Շահ Աբաս քաջալերուած փախտտականներու յորդորներէն, որոնք կը վստահացնէին, թէ անաշխատ հնարաւոր պիտի ըլլայ նուաճել Թուրքերէն Այրարատեան դաշտը Դաւրէժէն մինչեւ Կարս, 1603ին կը շարժէ բանակը Դաւրէժի վրայ: Առանց մեծ դիմադրութիւնի կրելու կը յառաջանայ Շահը մինչեւ Երեւան, որ կ'իյնայ...:

Այս արշաւանքի միջոցին մեծամեծ ծառայութիւններ կը մատուցանէ Մելիք Հայկազն իւր քաջագործութիւններով Պարսից Շահին. որ վարձատրելով անոր շահատակութիւնները կը շնորհէ իրեն հայրենի գաւառին իշխանութիւնը, օժտելով մասնաւոր պատիւներով:

Մելիք Հայկազն ինչպէս բազկով քաջարի, նոյնպէս հոգևով ազնիւ էր, երկիւղած եւ աստուածապաշտ: Իր գովութիւնը կը ներբողէ Ներսէս Մոկացի, որուն տողերը արժանի են ուշադրութեան (Հայապատում, § 398).

Աւետարան մը կ'օրինակէ «ի դաւառիս Քաշքաղուց (տպ. քաջթաղուց), ի դեղոյս որ կոչի Խոզանավար, ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի նախավկայիս» (Ն. Մուս, Յուցակ հայ. ձեռագրաց Սեւանայ, էջ 5): Իսկ ուրիշ զրիչ մը՝ Միքայէլ սարկաւազ 1652ին կ'օրինակէ Աւետարան մը «ի յաստուածարնակ եւ յանտիկ զդեակս Քաշթաղ ի դեօղն Խոզնավար, ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի նախավկային»։ Երեւան, Պետ. Թանգարան, Թ. 155: Մարիամ սպաշխարող իւր հօրեղբոր Մարկոս եպիսկոպոսի համար կ'օրինակէ Ն. Ծնորհալոյ Տաղերը «ի յերկիրս Քաշթաղու ի դուզս Խանածախ, ընդ հովանեաւ Ամենափրկչիս», ՌՂԶ (1647) Թուին. Աճառեան, Յուց. Թաւրիգի, էջ 101: